



Սեպտեմբերի 16-ին Բյուրեղավանում մեկնարկեց Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության նախարարության նախաձեռնությամբ անցկացվող ամենամյա մարզական փառատունը: Բյուրեղավանի քաղաքային մարզադաշտում տեղի ունեցավ բացման արարողություն, որին ներկա էին քաղաքապետարանի ներկայացուցիչները՝ փոխքաղաքապետ Միշա Եղիազարյանի գլխավորությամբ, մարզադպրոցի, ավագ և հիմնական դպրոցների ներկայացուցիչներ: Մինչ այսօր փառատունի շրջանակներում անցկացված մարզական խաղերին իրենց մասնակցությունն են բերել բյուրեղավանցի հազարավոր մարզիկ-մարզուհիներ: «Այս տարի մասնակից մարզիկների թիվը անցնում է 300-ից, իսկ դա նշանակում է, որ տարեցտարի մեծանում է հետաքրքրությունը փառատունի նկատմամբ: Մարզիկները շատ ակտիվ են, արդյունքները՝ բավարար», - ասում է Բյուրեղավանի «Մարզամշակութային կենտրոնի» տնօրեն Էդիկ Պիճիկյանը: Փառատունի ծրագրով նախատեսված սպորտային խաղերի ցուցակը հետևյալն էր՝ կշռաքարերի բարձրացում, շախմատ, նարդի, ազգային «Կոխ» ըմբշամարտ, բազկամարտ, մինի ֆուտբոլ և վազք՝ 1000 մետր մարզածներից: Մասնակցում էին քաղաքի հիմնական, ավագ դպրոցների, մարզադպրոցի, պետական արհեստագործական ուսումնարանի սաները: Բարձր արդյունքներ գրանցվեցին կրոսավազքից: 21 մարզիկ պարգևատրվեց Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, իսկ հաղթողները՝ մրցանակներով:

17.09.15.